— Ձեր ընծան որքան հիանալի է, սրբազան հայր, — ասաց Ասլանը, — բայց խոստովանում եմ, որ նոյնքան ես վատ հնագէտ եմ նրանշանակութիւնը հասկանալու համար: Բացատրեցէ՛ք, խնդրեմ, դա ի՞նչ բանի է ծառայում:

— Դա մեր վանական աբեղաների հնարած մի գործիք է, կոչւում է «տիրուհի», հէնց այդ անոան մէջ է նրա նշանակութիւնը, որովհետեւ կատարում է նոյն ծառայութիւնը, ինչ որ տան տիրուհին կատարում է ընտանիքի մէջ: Հայոց ընտանիքներում դեռ պահպանոել է վաղեմի սովորութիւնը, որ տան տիրուհին քորում է իր սկեսուրի, սկեսրայրի եւ մինչեւ անգամ յարգելի հիւրերի մէջքը, մաժում է նրանց ոտները եւ հանգստացնում է նրանց քնելու ժամանակ: Որովհետեւ աբեղաները զրկոած են տիրուհիներից, հնարել են մի այսպիսի գործիք իրանց մէջքը քորելու:

— Շատ սուր կատակ է աբեղաների կողմից, — խօսեց Ասլանը ժպտելով: — Ասացէք խնդրեմ, ո՞ր դարու գործ է այդ «տիրուհին»:

— Պէտք է տասներկոերորդ դարու գործ լինի, որովհետեւ այն կաթողիկոսը, որին ընծայոած է եղել այդ «տիրուհին», ապրում էր տասներկոերորդ դարում, դա Դաւիթն էր, որ Աղթամարայ կաթողիկոսութեան սկիզբը դրեց:

Ասլանը, փոքր ինչ դժոարութիւն ցոյց տալով, կարդաց հետեւեալ մակագրութիւնը:

«Ի վայելումն Դաւթի Աղթամարայ սրբազնասուրբ կաթողիկոսի»: «Ի Հնդիկս»: — Ուրեմն Հնդկաստանի գործ է, երեւում է, հայերը վեռ տասներկոերորդ դարում Հնդկաստանում գաղթականութիւն են ունեցել:

— Այդ չգիտեմ, — պատասխանեց սրբազանը:

— Ասացէք խնդրեմ, այս տեսակ «տիրուհիներ» մինչեւ այսօր գո՞րծ են ածւում ձեր վանքներում:

— Այո՛, գործ են ածւում, մանաւանդ այն վանքերում, ուր բոլորովին փակոած կեանք են վարում:

— Հիանալի գեղարոեստ կայ դրա մէջ, — ասաց Ասլանը իսկապէս հրճոելով, — այդ «տիրուհին» կարող է Եւրոպայի ամենանշանաւոր մուզէումներից մէկի զարդը լինել, բայց ես ինձ մօտ կը պահեմ, իբրեւ, թանկագին յիշատակ: Ուրեմն թոյլ տոեցէք, սրբազան հայր, իմ կողմից եւս ձեզ մօտ մի փոքրիկ յիշատակ թողնել:

Ասլանը նայեց իմ երեսին, ես մօտեցայ եւ քթախոտի փղոսկրեայ տուփը, որ պահոած էր գեղեցիկ պատեանի մէջ, դրեցի նրա առջեւ: Նա վեր առեց եւ տոեց սրբազանին, որ շնորհակալութեամբ ընդունելով, ասաց: